ԿԱՐԾԻՔ

ՍԻՄՈՆ ՍՆԳՐՅԱՆԻ «ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՑՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վերջին մի քանի տասնամյակում համաշխարհային տնտեսության զարգացման միտումները ցույց են տալիս, որ գլոբալացումն այն հիմնական գործոններից է, որը կանխորոշում է երկրների տնտեսությունների զարգացման տեմպերն ու օրինաչափությունները: Ընդ որում, գլոբալացման հատկապես բացասական ազդեցությունն ավելի մեծ է զարգացող և անցումային երկրների վրա, ինչպիսին նաև Հայաստանն է, քանի որ վերջիններս գտնվում են սոցիալ-տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների գործընթացում, ինչը զգալիորեն բարդացնում է նրանց մուտքը գլոբալ տնտեսություն: Բնականաբար, որքան մեծ է նման ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռն արտահանման կառուցվածքում, այնքան բարձր է տվյալ երկրի ինտեգրման արդյունավետությունը գլոբալ տնտեսությանը:

Արդի համաշխարհային գլոբալ տնտեսությանը բնորոշ հատկանիշներից մեկը դրա բացությունն է: Բաց տնտեսությունը բնութագրվում է որպես աշխատանքի միջազգային բաժանման հիմքի վրա արտադրության մասնագիտացում և կոոպերացում, արտաքին առևտրի մենաշնորհի վերացում, ազատ ձեռնարկատիրության բոլոր ձևերի զարգացում, ազատ տնտեսական գոտիների ձևավորում:

Գիտության և տեխնոլոգիաների առաջընթացով պայմանավորված արտադրողական ուժերի զարգացումը և դրանց միջազգայնացումը, ինչպես նաև ազգային տնտեսությունների ազատականացումը, ապահովելով կապի ու տեղեկատվության փոխանցման միջոցների աննախադեպ զարգացում և կապիտալի, ապրանքների, ծառայությունների ու մարդկանց հոսքերի աճ, հանգեցրել են պետությունների, դրանցում գոյություն ունեցող ինստիտուտների, ընկերությունների, արժութաֆինանսական համակարգերի աննախադեպ փոխկապվածության: Արդյունքում, բնականաբար, խորանում է նաև վերը նշված համակարգերի փոխկախվածությունը և

աշխարհի որևէ մասում տեղի ունեցող ցանկացած կարևոր քաղաքական, տնտեսական, գիտական, տեխնոլոգիական, մշակութային, բնապահպանական և այլ երևույթի փոփոխությունը արագ արձագանք է գտնում գլոբալ մակարդակում և որոշակի ազդեցություն է ունենում (դրական կամ բացասական) այլ երկրների համապատասխան ոլորտների վրա:

Հայաստանի փոքր և բաց տնտեսական համակարգ ունեցող երկրի համար էական նշանակություն ունեն արտաքին հարաբերությունները, որոնք կարող են ապահովել երկրի շարունակական տնտեսական աճը: Արտաքին տնտեսական հարաբերություններն անմիջականորեն կապված են «տարածաշրջան» հասկացության հետ, որը դիտարկվում է ոչ միայն որպես աշխարհագրական, այլև տնտեսական և քաղաքական միավոր:

Երկրները մասնակցում են տնտեսական ինտեգրման գործընթացներին ոչ թե չցանկանալով հետ մնալ համաշխարհային տնտեսության մեջ ընթացող գործընթացներից, այլ դրա միջոցով փորձում են լուծել որոշակի տնտեսական խնդիրներ:

Տնտեսական ինտեգրման միջոցով հայրենական արտադրողներին հնարավորություն է ընձեռնվում իրենց արտադրանքը տվյալ ինտեգրացիոն գործընթացին մասնակից այլ երկրների տարածք արտահանել առանց ներմուծման մաքսատուրքերի:

Բաց տնտեսության ձևավորմանը նպաստում է պետությունը, որը վարում է ապրանքների և ծառայությունների արտահանումը խթանող արտաքին քաղաքականություն, ստեղծում օտարերկրյա կապիտալի ներգրավման, համատեղ ձեռնարկությունների զարգացման համապատասխան իրավական դաշտ: ՎԱԿ-ներն իրենց հերթին ևս դուստր ընկերությունների և մասնաճյուղերի միջոցով կարողանում են շրջանցել ցանկացած պատնեշ՝ այլ երկրներում արտադրության կազմակերպման համար: Բաց տնտեսության ձևավորմանը առանձնահատուկ թափ հաղորդեց XX դարի կեսից տեղեկատվության բոլոր ձևերի, տրանսպորտի և կապի բուռն զարգացումը: Բաց տնտեսությունը հանգեցնում է երկրների միջև արտադրության գործոնների համեմատական առավելությունների ավելի արդյունավետ օգտագործմանը, արտադրության մասնագիտացման խորացմանը, երկրների միջև համաշխարհային փորձի տարածմանը և, վերջապես, ինչպես տարբեր երկրների արտադրողների, այնպես էլ ազգային արտադրողների մրցակցության սրմանը:

Վերոնշյալն ընդգծում է Հայաստանի տնտեսության բացության հիմնախնդիրների և ինտեգրացիոն քաղաքականություն ակնհայտ կարևորությունը, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի ***արդիականությունն ու անհրաժեշտությունը:***

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսության բացության մակարդակը և դրա կապը միջազգային տնտեսական ինտեգրման հետ» գլխում, անդրադարձ է կատարվել տնտեսության բացության մակարդակին՝ որպես միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման կարևոր միտման, տնտեսական ինտեգրմանը՝ որպես տնտեսության բացության և տնտեսական արդյունավետության ապահովման գործիքի, ինչպես նաև միջազգային առևտրի արդյունավետության բարձրացման վրա նրա ազդեցությանը:

Բացության հիմնախնդիրը որոշակի փոխակերպվում է տնտեսական ինտեգրման պայմաններում: Ինտեգրացիոն գործընթացների զարգացումը, որը պայմանավորված է տարածաշրջանի մակարդակով ազգային տնտեսությունների բացության աստիճանի ավելացմամբ, արդի համաշխարհային տնտեսական համակարգում բացատրվում է այն հանգամանքով, որ անդամ երկրները ձգտում են բարձրացնել իրենց տնտեսությունների գործունեության արդյունավետությունը: Եթե երկրները ինտեգրումը դիտարկում են որպես արդյունավետ տնտեսական զարգացման և սահմանափակ արտադրական հնարավորությունների հաղթահարման ուղի, ապա փոխադարձաբար բացում են իրենց տնտեսությունները: Սակայն միայն փոխադարձ հիմնավորված և խելամիտ բացության մակարդակն է նպաստում են արագ տնտեսական աճի:

Այսպիսով, հեղինակը փաստում է, որ գոյություն ունեն ինտեգրացիոն և տնտեսության ազատականացման մի շարք մոտեցումներ, որոնց հիման վրա կարելի է որոշել տվյալ տարածաշրջանում կամ երկրների միջև ազատ առևտրի գոտու ստեղծման նպատակահարմարությունը:

Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ ինտեգրացիոն խմբավորման ներսում մակրոտնտեսական գործընթացների աստիճանական ներդաշնակեցումը հանգեցնում է ոչ միայն առևտրի բացության, այլև նաև կապիտալ ներդրումների, արժութային քաղաքականության, արդյունաբերական արտադրության զարգացման և մի շարք այլ գործընթացների մերձեցման ու ազատականացման նախադրյալներ է ստեղծում:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ տնտեսության բացությունը և արտաքին հատվածի զարգացման հիմնախնդիրները» գլխում, ներկայացվել են բաց տնտեսության և արտաքին առևտրի փոխկապվածության հիմքերը, ՀՀ տնտեսական բացությունը և օտարերկրյա ներդրումների ներգրավման հիմնախնդիրները, ինչպես նաև տնտեսության բացությունը՝ որպես արժութա-ֆինանսական հարաբերությունների կատարելագործման գործոն:

Ինտեգրման պայմաններում տնտեսության բացության մակարդակը գնահատելու համար հեղինակը առաջարկում է ԵԱՏՄ շրջանակներում կիրառել և հաշվարկել նոր ցուցանիշ՝ փոխադարձ առևտրի քվոտա՝ որպես տարածաշրջանային ինտեգրացիոն միավորման ներսում փոխադարձ ներմուծման և արտահանման գումարի հարաբերակցություն ՀՆԱ-ին:

ԵԱՏՄ երկրների ներդրումային համագործակցությունը ինչպես անդամ երկրների, այնպես էլ Միության կայուն զարգացման նախապայմաններից է, որը բնութագրող առավել ընդհանուր ցուցանիշներից է փոխադարձ օտարերկրյա ուղղակի ներդրումները: Այս համատեքստում հեղինակը փորձում է գնահատել, թե որքանով է ԵԱՏՄ պայմանագիրը, միաժամանակ ներդրումների և առևտրի մասով, հանգեցնում երկրների միջև ավելի խորը տնտեսական ինտեգրմանը:

Այս նպատակով հետազոտվել է ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ ներդրումային հոսքերի և փոխադարձ առևտրի ծավալների միջև առկա փոխկապվածությունը:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման կատարելագործման հիմքերը տնտեսության բացության համատեքստում» գլխում, դիտարկվել են առևտրի ազատականացման հետևանքների գնահատումը երրորդ երկրների հետ, ՀՀ տնտեսական համագործակցության հիմնախնդիրներն ու հեռանկարները ԵՄ երկրների հետ, ինչպես նաև ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները ԵԱՏՄ անդամակցության համատեքստում:

Հեղինակը իրականացրել է հետևանքների բազմամակարդակ վերլուծություն՝ գնահատելով այդ հետևանքները մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության վրա: Այս գլխում հեղինակը ներկայացրել է նաև ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները ԵԱՏՄ անդամակ-

ցության համատեքստում:

Գնահատվել է ԵԱՏՄ հետագա ընդլայնումը՝ որպես պոտենցիալ գործընկերներ դիտարկելով Պակիստանը, Կորեան, Մալազիան: Այս համատեքստում կարևոր է ԵԱՏՄ և երրորդ երկրների հետ իրականացնել առևտրի, առկա առևտրային խոչընդոտների համակողմանի վերլուծություն, որի հիման վրա կարելի է գնահատել Հայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ու պոտենցիալ հնարավոր գործընկերների հետ տնտեսության ազատականացման հնարավոր հետևանքները:

Կիրառելով GTAP հավասարակշռության մոդելը՝ գնահատվել են Կորեայի, Մալազիայի և Պակիստանի հետ մաքսատուրքերի ազատականցման արդյունքում ստացվող հնարավոր արդյունքները, մասնավորապես՝ ՀՆԱ-ի տոկոսային փոփոխությունը, ըստ մոդելի ոլորտների թողարկման ծավալների փոփոխություն (%), աշխատուժի շուկայի վրա հնարավոր ազդեցության փոփոխությունը, գործընկեր երկրից Հայաստան ներմուծման ծավալի փոփոխությունը (%), դեպի գործընկեր երկիր արտահանման ծավալի փոփոխություն (%):

Ինչպես ցույց տվեց կատարված վերլուծությունը, երրորդ երկրների հետ առևտրի ազատականացումը ևս միանշանակ չէ, և կարող է տարաբնույթ ազդեցություն ունենալ թե երկրի ՀՆԱ-ի, թե զբաղվածության, թե ներմուծման և արտահանման կառուցվածքի և ծավալների, ինչպես նաև մի շարք այլ գործոնների վրա:

Այս համատեքստում տնտեսության հետագա ազատականացումը պետք է հենվի նմանատիպ համակողմանի գնահատականների, զգայուն ճյուղերի և ապրանքների դուրս բերման վրա: Նմանատիպ գնահատականները թույլ կտան գնահատել հետագա ազատականացման հնարավորությունները և սպառնալիքները:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ միջազգային տնտեսական ինտեգրման շրջանակներում առևտրի բացության գնահատման համար մշակվել և հաշվարկել է նոր ցուցանիշ՝ փոխադարձ առևտրի քվոտա, GTAP մոդելավորման կիրառմամբ գնահատվել է երրորդ երկրների հետ առևտրի ազատականացման ազդեցությունը ԵԱՏՄ անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի, մակրոտնտեսական զարգացման ցուցանիշների վրա, վերհանվել են դեպի ԵԱՏՄ ներմուծման նկատմամբ զգայուն ապրանքները, կազմվել են այդ երկրներից ներմուծման նկատմամբ բարձր զգայունությամբ օժտված ապրանքախմբերի մատրիցները, գնահատվել է պոտենցիալ առևտրային գործընկեր-երկրների հետ մասնագիտացմանը համապատասխանող ապրանքների արտահանման ներուժը, ինչպես նաև ապացուցվել է, որ ԵԱՏՄ ներդրումային հոսքերի և փոխադարձ առևտրի ծավալների միջև առկա է ուժեղ կապվածություն:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն կողմնորոշվելու անցման փուլում գտնվող երկրներում ինտեգրացիոն քաղաքականության ներդաշնակեցման առավել հրատապ հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում տարածաշրջանային ինտեգրման շրջանակներում քաղաքականության համակարգումն ապահովող ծրագրերի իրատեսականությանը, ինտեգրացիոն քաղաքականության բարելավմանը և արտաքին տնտեսական հարաբերությունների ազդեցության գնահատմանը նվիրված ուսումնասիրությունների և գործնական մշակումների ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ,*** որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

1. Գնահատելով հանդերձ հեղինակի կատարած վերլուծությունը, այդուհանդերձ, աշխատանքի առաջին նորույթը խիստ վերապահմամբ կարելի է այդպիսին համարել, քանի որ այն ընդամենը արդեն իսկ հայտնի ցուցանիշների՝ ներմուծման, արտահանման և արտաքին առևտրի քվոտաների վերափոխված տարբերակն է: Իհարկե, այն պատկերացում տալիս է տվյալ երկրների տնտեսությունների մեջ փոխադարձ առևտրի դերի

մասին, սակայն ցուցանիշի ներմուծումը որպես կարևորագույն խնդրի լուծում դիտարկելը դժվար է:

2. Անհրաժեշտ է վերջին նորույթն ավելի «բացել» և հասցեական դարձնել, այլապես չի հասկացվում, թե մատնանշված ուժեղ կախվածությունն ինչ ուղղությամբ և ինչ միջոցներով կարելի է ծառայեցնել երկրի տնտեսական քաղաքականությանը:
3. Թեև հեղինակի կողմից կատարվել է բավականին լայնածավալ աշխատանք բաց տնտեսության բնորոշման և հիմնական առանձնահատկությունների մասին, սակայն հետազոտության համար առավել շահեկան կլիներ, եթե տնտեսության բացության առավելություններին զուգահեռ դիտարկվեին նաև ռիսկերը, որոնց չեզոքացմանը կամ առնվազն նվազեցմանն են ուղղված լինում արտաքին տնտեսական քաղաքականության ջանքերը:
4. Ատենախոսության 3.3. ենթագլուխը, որը նվիրված է արժութաֆինանսական հարաբերությունների կատարելագործման գործում տնտեսության բացության դերին ու նշանակությանը, հեղինակը խիստ հպանցիկ է խոսում ԵԱՏՄ շրջանակներում արժութային միության ստեղծման խնդիրների, խոչընդոտների և հեռանկարների մասին: Կարծում ենք, վերը նշված հարցի քննարկումն անհրաժեշտ էր, նույնիսկ եթե այդ վերլուծությամբ հիմնավորվեր նշված միության ստեղծման ժամանակավրեպ լինելը:
5. Հեղինակն առհասարակ անդրադարձ չի կատարել ռուս-ուկրաինական պատերազմին և վերջինիս հետևանքներին, ինչպես տնտեսության բացության, այնպես էլ Հայաստանի արտաքին տնտեսական վեկտորների վերափոխման և/կամ հասցեականության բարձրացման իմաստով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա, այլ հետապնդում են Հայաստանի Հանրապետությունում ինտեգրացիոն քաղաքականության նպատակայնության բարձրացման, զարգացող երկրներում բաց տնտեսությանը վերաբերող արդիական խնդիրների լուծմանը և զարգացմանն ուղղված քաղաքականությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Ս. Սնգրյանի թեկնածուական ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության ինտեգրացիոն քաղաքականության կատարելագործման, մասնավորապես՝ համաշխարհային տնտեսության զարգացման շրջանակներում ինտեգրացիոն քաղաքականությունների համակարգման հարցերով զբաղվող մարմինների գործունեության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների ներդրման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, «ՀՀ տնտեսության բացության միտումներն ու հիմնախնդիրները միջազգային տնտեսական ինտեգրման պայմաններում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ **Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**

ՊԱՐՈՆ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ն.ԴԱՐԲԻՆՅԱՆ**
22.05.2023.